



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ  
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

«28» 06 2019 N 78-Ճ

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ և  
ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և հիմք ընդունելով 14.06.2019 N 74-Լ հրամանով ստեղծված աշխատանքային խմբի 2019 թվականի հունիսի 27-ի նիստի N 1 արձանագրությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել և 2019թ. սեպտեմբերի 16-ից գործողության մեջ դնել հետևյալ ազգային ստանդարտները՝
  - ՀՍ ԵՆ 378-3:2019 «Սառնարանային համակարգեր և ջերմային պոմպեր, անվտանգության և շրջակա միջավայրի պահպանության պահանջներ Մաս 3. Սարքավորումների տեղադրումը և անհատական պաշտպանությունը»
  - ՀՍ ԵՆ 378-4:2019 «Սառնարանային համակարգեր և ջերմային պոմպեր, անվտանգության և շրջակա միջավայրի պահպանության պահանջներ Մաս 4. Շահագործումը, տեխնիկական սպասարկումը, վերանորոգումը և վերականգնումը»
2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել տնօրենի առաջին տեղակալ Մ. Բզնունուն:

Տնօրենի պաշտոնակատար՝

Ա. ԲԱԲՅԱՆ